

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Թիի 435

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ

1869

ՀՈԿՏԵՄԲԵՐ 20

Ամեն օր կհրատարակուի : — Հատր 40 փարայ է : — Պօլիս րաժմանորդ ըլլալ ուզողք մէկ արձաթ Մէճիս պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դր, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրացրի՛մ վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

Կ. ՊՈԼԻՍ. — ԳՈՆՍՈՒԻՏԷ

18 հսկա.	չարաթ	երեկոյ	ըշ	էր.
		գոցուեցաւ	46	24

### Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մայրաքաղաքիս բնակիչներէն, և մեն ազգ է և ամեն սեռէ, անհամար բազմութիւն, Պէշիկթաշ Պէյօղլու իւսկիւտար և շրջակաները թափած էին երէկ, իտես և իյարդանս Աւրասիոյ վեհապառ կայսեր :

Նորին վեհապառութեւնը, ինչ պէս արդէն ծանուցուած էր, առաւօտուն Պէշիկթաշի պալատէն հանդիտիւ Պէյօղլու Լտախնաց եկեղեցին գնաց աղօթելու, և անկէջ աւսարիական դեռպանատունը, ուր պաշտօնական ընդունելութիւններ եղան և մէկ երկու ազգաց կողմանէ պատգամաւորութիւններ ներկայացան ի շնորհաւորութիւն : Բերա, եկեղեցին ու դեռ պրանատունը շքեղ կերպով զարդարուած էին : Յաղթական կամարներ կանգնուած էին, և տուներն ու խանութները աւսարիական ու օսմանեան դրօշակներով ու ծանրագին կերպաներով կձամանէին :

Չգենք Պէյօղլուն, ու իւսկիւտար անցնինք, ուր դարձեալ ազգային շքեղ հանդէս մը անգի ունեցաւ ի պատիւ Նորին վեհապառութեան :

Ժամը ըննին ատեններէն էր իւսկիւտար անցաւ կայսրը, և Սէլիմիյէի զօրանոցը գնաց : Հոն քառորդի մը չափ կեցաւ, և զինուորական պատիւներ եղան : Անկէջ մինչև Պէյլէրպէյի, ժամու մը չափ ճամբայ, մեծ բազմութիւն թափած էր : Ժամը 11ին մօտ էր, Պաղլարպաշիէն և թօփհանէլի օղլիէն անցաւ : Չիով էր և պարզ կերպարանքով. հետին էին արտաքին դրծոց պաշտօնեաց անուանի Պ. Պայսթ և աւսարիական ու օսմանեան բարձրատիճան անձինք, երեսունի չափ տեղ տեղ գլխարկը բարձրացունելով զուարթ դէմքով կը արև էր ժողովուրդը :

Իճատիյէի զլուխը, Պէյլէրպէյի երթալու արահետ ճամբուն վրայ հանդ առաւ Նորին վեհապառութիւնը՝ աչքին զդրնելով հանդէս մը, և սկսաւ գլխարկը երկու կողմին ծածանեցունել. հոն ոչ թնդանօթներ կարտային, ոչ նուազ արաններ կհնչէին, այլ «կեցցէ կայսր» քաղցրիկ առ աչ



մը կըլուէր խումբ մը սպիտակազգեստ  
 դեռափթիթ օրիորդաց և խումբ մը  
 կոկիկ հազուած մանչ տղոց շրթունք-  
 ներէն, որոնք Սէլամիյէի երկսեռ  
 վարժարանէն հոն եկած երկու կողմը  
 կայնած էին, երկու ճարտարարուեստ  
 դրօշակներ և երկու ուղերձներ բարձ-  
 րացուցած, մէկը Նորին վեհափառու-  
 թեան Յովսէփ Ծրանչիսկոս կայսեր,  
 և միւսը՝ մեր օգոստափառ Սուլթա-  
 նին ուղղեալ: Կայսրը ուշի ուշով նա-  
 յեցաւ դրօշակներուն, ուղերձներն  
 ուղեց և ընդունելէն ու Պ. Պայտի  
 յանձնելէն յետոյ դարձեալ գլխարկը  
 ծածանեցունելով և ժպտելով ու շը-  
 նորհակալութիւններ մատուցանելով  
 սկսաւ շարունակել ճամբան, երգերու  
 և բարեմաղթութիւններու ձայներով:

Կայսերական խումբն աներևութա-  
 նալէն յետոյ, յիշեալ սիրուն խումբ  
 բերնալ միւսնոյն հանդիսիւ ու երգե-  
 րով դարձան իրենց անդերը, շրջա-  
 պատեալ անհամար բաղմութենէ:

Ուրախ ենք որ կըլլանք ինչպէս  
 Գաղղիոյ շնորհալի վեհապետահոյն,  
 նոյնպէս և Սևասրիոյ կայսեր, մեր օ-  
 գոստափառ Սուլթանին վեհափառ  
 այցելուին այս առթիւ ալ մեր ազգին  
 կողմանէ յարգանաց պատշաճաւոր  
 դոյց մ'ընել: Հետեաբար՝ դարձեալ  
 շնորհակալութիւն կմատուցանեմք Սէ-  
 լամիյէի թաղական խորհրդոյն և ամեն  
 անոնց որ հաճեցան այս անգամ ալ  
 յիշեալ պատրաստութիւններն ընել  
 ի պատիւ մեր Սղղին:

Բաղմութիւ թաղեցիք խնդրեցին  
 ենէ յատկապէս շնորհակալութիւն  
 մատուցանել Քիւրքձիպաշեան մեծ.  
 Բարթեղ էֆենտին, որ այս հանդիսին

կարգադրութեան համար ոլ ամեն աշ-  
 խատութիւն յանձն առած էր:

Վանէն հոկ. 2 թուով դրուած  
 մասնաւոր նամակի մը մէջ անասնք  
 հետեւեալ տողերը:

«Սակեց ամիս մը յառաջ քաղաքս  
 եկաւ Սլթամարայ Յակոբ եպիսկոպոս,  
 Բակիներ դիւղի մերաղնեայց ցաւոյ  
 դարման աններու համար: Երեսուն  
 օրէ ի վեր հոս բանտարկուած է Սէ-  
 լիմ պէյի ժառանգ Մահմուտ պէյ. և  
 տասը աւուր չափ ալ է որ եղբարքը՝  
 Մածիս ու Սալիհ պէյեր բանտար-  
 կուած են: Նոյն դիւղացոյ կոյս  
 աղջկանց և ուրիշ կանանց հետ չարա-  
 դարձ խայտառակութիւններնին զլու-  
 ղացուց վիպտութեամբ հաստատուե-  
 ցաւ վրանին, բայց բանտարկութեան  
 սրչափ ժամանակ որոշուած ըլլալը  
 վաղը կ'այսանուի: Քասն տարիէ մին-  
 չև հիմա խեղճ դիւղացիները զուր  
 անգ և առանց վարձուց ծառայեցը-  
 ներնուն փոխարէնն ալ իրենցմէ պիտի  
 պահանջուի, և յիշեալ Սէլիմ պէյի  
 առնն ալ հանդերձ պարագայիւք  
 հանուի քաղաք պիտի բերուի »:

— Տրասիլզոնի և ճանիկի միացեալ  
 փեճակաց Սաաշնորդ գեր. Տ. Մես-  
 րովալ Ս. Արքեպիսկոպոսը մէկ երկու օ-  
 րէն մայրաքաղաքէն ճամբոյ կելնէ  
 դէպ ի եզիպոստ: Խառն ժողովոյ կող-  
 մանէ Եզիպոսի առժամանակեայ  
 Պատրիարքական Փոխանորդութեան,  
 և Սուէիշի Նրանցքին բացման հանդի-  
 սին մեր ազգին կողմանէ ներկայա-  
 ցուցչութեան պաշտօն յանձնուած է  
 Նորին գերապատուութեան:

— Կարինէն եկած նամակներ, ա-



մեն . Ս . Պատրիարք Հօր յիշեալ քա-  
ղաքը եղած աննման ընդունելութիւնը  
կնկարագրեն :

Քաղաքէն դուրս կիւմուշլու քիւմ-  
բէթ ըստած զաշտաւայրը արդէն  
պարասառած վրաններուն տակ ըն-  
դունուեր է Նորին Սրբազնութիւնը , կա-  
ռաւարութեան բարձր պաշտօնատար-  
ներէ , և ձիաւոր զորքերէ ու զինու-  
թական նուագարաններէ : Բարձր .  
կուսակալը պատուիրեր է Քրիստոնէից  
նոյն օրը կիրակի ընել . զաշտաւայրը  
փողոցները ու տանիքները ամեն ազ-  
դաց բազմութեամբ լցուած , հայ էֆէն-  
տիները և զօրքը համազգեստ հազած  
են , և եկեղեցւոյն դուռը ոտանաւոր  
զորքեր ու նուագարան կայնած են  
եղեր : Յոյնք և Հռոմէականք եկեղե-  
ցականներով ու հանդիսիւ դիմաւո-  
րեր են : Նորին Սրբազնութիւնը եկե-  
ղեցին մտնելով օրհներ է ժողովուրդը ,  
և բարեմաղթութիւններ ըրեր է օ-  
գոտու . Սուլթանին նախարարաց կու-  
սակալին և ընդհանուր Ազդին համար :

Ս . Պատրիարքը հետեւեալ օրը  
բարձր . կուսակալին տեսութեան դա-  
տեր , և քիչ մ'ետքը Նորին բարձրու-  
թեան փոխադարձ այցելութիւնը ըն-  
դուներ է : Հիւպատոսները , բարձր  
պաշտօնատարք և ազգայինք հետզ-  
հետէ շնորհաւորել կուղան Նորին  
Սրբազնութեան և բարձր . կուսակա-  
լին և Ս . Պատրիարք Հօր կողմանէ փո-  
խադարձ կոչունք պիտի արուին եղեր :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին տեղեկութեանց նայե-  
լով , Քրուսոյ դահածաւանդ իշխանք  
լատ . նոյ . Յին երուսաղէմ պիտի մըա-

նէ , և եօթը օր պիտի մնայ հոն . Պե-  
րութի ճամբով պիտի երթար , բայց  
ճանապարհին երկարութեան պատճա-  
ռաւ չէ ուզեր :

Իշխանք այլեայլ աստիճանի պա-  
տանշաններ և պարզւելներ ձգեր է  
ընծայելու համար սրոց անկ է :

— Հրէից Խախամազուիը երէկ  
մեծ հանդիսիւ Սուտրոյ կայսեր ներ-  
կայացեր է և շնորհաւորութիւն :

— Ռումանոյ ներքին գործոց  
պաշտօնեայն երկրին պատերուն վրայ  
տեղ տեղ գրեր փակցուել տալով ,  
կարողոս իշխանին նշանուած ըլլալը և  
հարսանեաց հանդէսին մօտերս կա-  
տարուելիքը ժանուցեր է հասարա-  
կութեան :

— Գաղղոյ Նաբոլէոն կայսրը թե-  
ղեսպուրկ առաջիկայ ասրոյն մէջ  
ըլլալիք Սրուեատահանդիսին հրաւիր-  
ուած ըլլալով , պատասխան գրեր է  
թէ՛ պատրաստ է ամենայն հաճու-  
թեամբ ներկայ գտնուելու , եթէ այն  
ատեն անձնական առողջութեան և  
քաղաքականութեան կողմանէ ար-  
գելք մը չունենայ :

— Ռուսաց կայսրը հրաման ըրեր  
է որ ազատութեան վրայ խօսող լրա-  
դիր կամ հանդէս Ռուսաստան բերող  
անձինքն հինգ տարիէն մինչև տասն-  
և հինգ տարի Սեպերիա արտօրանաց  
դատարարաւին և իւր անձին դէմ  
հրատարակութիւն բերողները մահ-  
ուան դատապարտուին : Հետեւաբար  
խտախ պանուերներ եղեր են մաք-  
ստանց վերատեսու ներսուն :

— Անցեալիքը ժանուցուեցաւ թէ  
Սմերիկայի մէջ ճարտարարուեստ մէկը  
տեսակ մը գործիք հնարած է , որով  
փոսնայի հանցարարը նաւերու մէջ



գտնուած ճամբորդք կրնան ազատիլ եղեր: — Ս.յս գիւտին հեղինակը հիմա Մնգղիա եկած ըլլալով՝ իւր գիւտը նախ իւր անձին վրայ փորձելու ելեր է: Գաղղիա անցնող նաւերէն մէկը մտնելով ծովուն խորերը ինքզինքը ծովը պիտի նետէ՝ Գաղղիա և լաստիկէ շինուած հանդերձ մը հազամ ըլլալով հետը պիտի գտնուի եղեր եօթը օրուան ուտելիք և ուրիշ պիտոյք պարունակող ճիւղէ շինուած անտուկ մը, և պիտի կենայ մինչև որ նոյն եօթը օրուան մէջ նաւ մը հանդիպելով զինքը անտէ: Ս.յս ճամբորդութիւնը ապահով և հանգիստ է եղեր, սակայն անանձնութեան պատճառաւ չվախնալու համար հետը ընկեր մը կուղէ եղեր:

Մեզի կեւայ թէ այս մարդը այս փորձը չպիտի կրնայ ընել, ուղած ընկերը չգտնելով:

Հետաքրքրութեան անդի ծայրը անցած մարդ մը ստուգեր է թէ բոլոր եւրոպայի մէջ ամեն օր 150 հազար օխայ Կիւտի կլաուի, և այսչափ բան չիսելու համար 200 հազար օխայ փայտ կգործածուի: Սակէջ զատ գտեր է թէ, Գաղղիոյ մէջ ամեն մէկ երկի մարդ օրը 7, Մնգղիոյ մէջ 8, և Պելճիզայի մէջ 9 Կիւտի կլաուի:

Ահաւասիկ օգտակար գիւտ մի: — Հում գումարելիք կրօնական ժողովին հրաւիրեալ աղքատ կղերականաց ճամբու և բնակութեան ու ուտելեաց ծախքը Պապին կողմանէ վճարուելու որոշում եղած ըլլալով, հաշիւ կըլլայ թէ մէկ ամսուան համար այս մասին մէկ միլիոն ֆրանկ պէտք է, և ժողովը եթէ քանի մը ամիսներ

տեէ՝ ալ աւելի գումարներու կկարտարի, որ բաւական դժուարութիւն կրնայ պատճառել Պապին՝ արդէն գանձային նեղութիւն ունենալու համար:

— Ճարմոնի երևելի հեղինակներէ մէկը սկսեր է տպագրել աւալ բնական պատմութեան մէկ գործը, որուն համար 40 տարիէ ի վեր կաշխատի, և 108 հատոր կըլլայ եղեր:

Կազմարարական գործատաննում մէջ մէկ քանի տղայոց պէտք ունիմք այս արհեստին փափաք ունեցող արդայք և կամ իրենց հայրը պէտք գան Չագմագճըլար եօզուչի Չիւպիլի խանին տակի գրատունը Յովսէփ Գավաֆեանի հետ տեսնուելու Թ. Գավաֆեան:

Էթնօֆ կամ Պէննի Իոսաբ անուն նոր հրատարակութիւն մը 8 ակադեմիկ զուրուչի կծախուի Պօլիս Չագմագճըլար եօզուչու Գավաֆեան գրատունը Պօլսոյ քաղաքագետութեան ժողովին անդամ մեծ Մէհմետ Միտհաթէֆէտին գաղղիարէնէ տաճկերէ թարգմանած է այս կարևոր ու պիտանի հեղինակութիւնը:

Պօլիս Գավաֆեան գրատունը իր կան զուրուչի կծախուի անտրակ ուր կսովրեցունէ կերակուրներ եղիւր և խմորեղէններ շինելու եղանակը:

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԵՂԷՆ  
Հ. Ս. ԱԼԱՏԱՅԻ  
ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՎՈՐՈՒԹԻՒՆ